ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 6, 1952 Общественные науки

Զ. Ս. Գրիգորյան

ԱՆԳԼԻԱՅԻ ԵՎ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՊԱՅՔԱՐԸ ԻՐԱՆԱ-ԹՅՈՒՐՔԱԿԱՆ ԼՈՒՅՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ԴԵՄ

Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, որը տեղի ունեցավ ռուսական բանակի երեք խոշոր արշավանքների հետևանքով (1804, 1808 և 1827 թթ.) և իր ձևակերպումն ստացավ Թուրքմենչայի 1828 թվականի փետրվարի 10-ի դաշնագրի կնքումով, հանդիսանում է հայ ժողովրդի կյանքի կարևորագույն էջերից մեկը, շրջադարձային կետ նրա պատմության մեջ։ Հայ ժողովրդի զգալի մասը, թոթափելով ծայր աստիճանի հետամնաց շահական Իրանի բռնակալական դարավոր լուծը, իր բախտը ընդմիշտ կապեց ռուս մեծ ժողովրդի բախտի հետ, կանգնեց տնտեսական և կուլտուրական զարգացման նոր ուղու վրա։

Հայ ժողովրդի ձգտումը միանալու Ռուսաստանին, բացատրվում է նրանով, որ իր ազգային ու պետական անկախությունը վաղուց կորցրած հայ ժողովուրդը գտնվում էր երկու հետամնաց ֆեոդալական պետությունների՝ Իրանի և Թյուրքիայի ամենադաժան ճնշման տակ։

Թյուրքական և իրանական կեղեքիչները ոչ միայն արգելակում էին հայ ժողովրդի տնտեսական ու հոգևոր զարգացումը, այլև բացեիբաց փարում էին նրա ֆիզիկական բնաջնջման քաղաքականություն։ Ստեղծված բացառիկ ծանր, կորստաբեր պայմաններում հայ ժողովուրդը ազատագրական պատերազմի ելավ իր դարավոր կեղեքիչների դեմ։ Սակայն ուժերի բացահայտ անհավասարությունը ցույց էր տալիս, որ Թյուրքական և իրանական ատելի տիրապետությունից հայ ժողովուրդը կարող է ազատագրվել միայն հարևան Ռուսաստանի օգնությամբ։ XVIII դարից սկսած հայ ժողովրդի ազատագրական պայքարը սերտորեն կապվում է Ռուսաստանի հետ։

Թեպետև Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելով ցարիզմը հետապնդում էր գաղութարարական նպատակներ, սակայն օբեկտիվորեն այդ միացումը հայ ժողովրդի հետագա պատմական զարգացման համար պրոգրեսիվ նշանակություն ունեցավ։ Ռուսաստանին միանալով՝ հայ ժողովուրդը փրկվեց ֆիզիկական ոչնչացման սպառնալիքից։ Արևելյան Հայաստանը ազգային օջախ դարձավ աշխարհով մեկ ցրիվ եկած հայերի համար. Թյուրքական ասիմիլատորներից ու ջարդարարներից այստեղ էին փրկություն գտնում Հարավ-Արևմտյան Հայաստանից գաղթած հայերը, այստեղ սկսեց զարգանալ հայ ժողովրդի պատմական, կուլտուրական և հոգևոր կյանքը։ Ռուսական առաջավոր դեմոկրատական կուլտուրան՝ գիտությունը, արվեստն ու գրականությունը, ռուս ռևոլուցիոն դեմոկրատական հասարակական միտքը

բարերար ազդեցություն գործեցին հայ կուլտուրայի և ռևոլուցիոն հասարակական մտքի զարգացման վրա։

Ռուսաստանին միանալը նպաստեց նաև Արևելյան Հայաստանի արտադրողական ուժերի զարգացմանը, բանվոր դասակարգի երևան գալուն, հայ ժողովրդի ներգրավմանը համառուսաստանյան ռևոլուցիոն շարժման մեջ՝ ընդդեմ ցարիզմի, ընդդեմ կեղեքիչների՝ կալվածատերերի ու բուրժուազիայի, հանուն սոցիալական ու ազգային լիակատար ազատագրության։

Հայ ժողովրդի ճակատագրի համար բեկումնային այդ պահին, երբ Ռուսաստանի օգնությամբ լուծվում էր իրանական ու թյուրքական լծից Հայաստանն ազատագրելու և Ռուսաստանին միացնելու հարցը, անգլիական ու ֆրանսիական գաղութարարները ոչ մի միջոցի առաջ կանգ չէին առնում, որպեսզի ձախողեն հայ ժողովրդի ազատագրական պայքարը և նրան պահեն թյուրք-իրանական բռնակալության լծի տակ։

1920 թվականին ընկեր Ստալինը իր «Կեցցե Սովետական Հայաստանը» հոդվածում տվեց հայ ժողովրդի նկատմամբ կիրառվող անգլիական քաղաքականության սպառիչ գնահատականը։ «Ո՛չ Անգլիայի, հայկական շահերի «դարավոր պաշտպանի» կեղծ հավաստիացումները, ո՛չ Վիլսոնի տխրահռչակ տասնևչորս կետերը, ո՛չ Ազգերի Լիգայի մեծադղորդ խոստումները Հայաստանի կառավարման իր «մանդատով» չկարողացան (և չէին կարող) փրկել Հայաստանը կոտորածից ու ֆիզիկական բնաջնջումից։ Միայն Սովետական իշխանության գաղափարը Հայաստանին բերեց խաղաղություն և ազգային վերածննդի հնարավորություն»[1]։

Հայկական շահերի «դարավոր պաշտպանի» դերում հանդես գալու վարձեր անող անգլիական բուրժուազիայի հավաստիացումների կեղծությունը ամենայն ակներևությամբ արտահայտվեց դեռևս XIX դարի սկզբում։ «Սկսած XVIII դարի վերջի ֆրանսիական բուրժուական մեծ ռևոլուցիայից,— ասել է Ի. Վ. Ստալինը 1927 թվականին,— և վերջացրած այժմ տեղի ունեցող չինական ռևոլուցիայով, անգլիական բուրժուազիան միշտ կանգնած է եղել և շարունակում է կանգնած մնալ մարդկության ազատագրական շարժումը ջախջախողների առաջին շարքերում»[2]։

Անդրկովկասը, այդ թվում նաև Հայաստանը թյուրքական ու իրանական տիրակալության ներքո պահելու համար, Անգլիան ու Ֆրանսիան ռուս-թյուրքական և ռուս-իրանական պատերազմների ժամանակ տնտեսական ու ռազմական մեծ օգնություն էին ցույց տալիս Թյուրքիային և Իրանին։

Այսպիսով, XIX դարի սկզբում Մերձավոր Արևելքում անգլիական ու ֆրանսիական քաղաքականությունը ուղղված էր ոչ միայն Ռուսաստանի, այլև Անդրկովկասի ժողովուրդների դեմ։ Ուստի և թյուրքական և իրանական սատրապների դեմ անդրկովկասյան ժողովուրդների պայքարը միաժամանակ պայքար էր նրանց թիկունքում կանգնած անգլիական ու ֆրանսիական գաղութարարների դեմ։

Ռուս-իրանական պատերազմների ժամանակ ռուսական բանակի տարած հաղթանակով վերջ տրվեց իրանական ծանր լծին Վրաստանում, Արևելյան Հայաստանում և Ադրբեջանի հյուսիսային մասում. ձախողվեցին իրանական

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատոր 4, էջ 458։

[2] Նույն տեղում, հատոր 9, էջ 360։

կեղեքիչների և նրանց հովանավորների՝ անգլիական ու ֆրանսիական գաղութարարների պլանները։ Այսպիսով, Անդրկովկասի միացումը Ռուսաստանին հանդիսացավ ռուսական զենքի և ռուսական դիվանագիտության հաղթանակը ոչ միայն Իրանի դեմ, այլև անգլիական ու ֆրանսիական զավթիչների դեմ։

* * *

Եվրոպայում և Արևելքում քաղաքական ու տնտեսական տիրապետության համար Ֆրանսիայի և Անգլիայի միջև XVIII դարի վերջում և XIX դարի սկզբում տեղի ունեցած կատաղի պայքարում չափազանց կարևոր նշանակություն ստացան Թյուրքիան (Օսմանյան կայսրությունը) և Իրանը (Պարսկաստանը)։ Այդ երկրներով էր անցնում դեպի արևելք, դեպի Հնդկաստան տանող ճանապարհը։ Այդ ժամանակ այդտեղ տիրապետող դիրք էր նվաճել Անգլիան, որը Հնդկաստանը դարձրել էր իր գաղութը։ Նապոլեոնը իր հերթին ձգտում էր խարխլել և տապալել անգլիացիների տիրապետությունը Հնդկաստանում։

Ռուսաստանի առաջխաղացումը Անդրկովկասում, Վրաստանի միացումը Ռուսաստանին դժգոհության ու դիմադրության հանդիպեց ոչ միայն թյուրքական ու իրանական զավթիչների՝ Անդրկովկասի ժողովուրդներին ճնշողների կողմից, այլև միմյանց թշնամի անգլիացիների ու ֆրանսիացիների կողմից։ Անգլիան և Ֆրանսիան ձգտում էին Ռուսաստանին ստիպել ծառայելու իրենց շահերին։ Անգլիան Ռուսաստանը դիտում էր որպես իր մրցակիցը Մերձավոր Արևելքում և մտածում էր նրան ետ մղել Թերեք գետի այն կողմը։ Անգլիան ինքը, ինչպես և Ֆրանսիան, երազում էր իր տիրապետությունը հաստատել Թյուրքիայում և Իրանում, ինչպես նաև ամբողջ Կովկասում։ Անգլիան և Ֆրանսիան իրենց ինտրիգներն էին հյուսում Մերձավոր Արևելքում միմյանց դեմ և Ռուսաստանի դեմ. այդ երկու երկրներից յուրաքանչյուրը ձգտում էր Թյուրքիան և Իրանը դարձնել իր քաղաքականության գործիքը, իրեն ենթարկել նրանց և օգտագործել Ռուսաստանի դեմ մղվող պայքարում։

Անգլիայի և Ռուսաստանի ազդեցության տակ թյուրքական Սելիմ III սուլթանը հրաժարվեց Նապոլեոնին ճանաչել Ֆրանսիայի կայսր։ Դրան ի պատասխան՝ Նապոլեոնը սուլթանին ուղարկեց մի նամակ, որով աշխատում էր առաջ բերել Թյուրքիայի անվստահությունն ու թշնամությունը Ռուսաստանի նկատմամբ և միաժամանակ Ֆրանսիային ներկայացնել որպես Թյուրքիայի «անկեղծ բարեկամ», ամրապնդել այնտեղ ֆրանսիական ազդեցությունը։ Ստանալով Նապոլեոնի նամակը, Սելիմ III սուլթանը որոշ ժամանակ տատանվում էր որոշակի վճիռ ընդունելու, սակայն 1805 թվականին Աուստերլիցի մոտ Նապոլեոնի տարած հաղթանակը այս հարցում վճռական ազդեցություն ունեցավ և սուլթանը բարյացակամ դիրք գրավեց Ֆրանսիայի նկատմամբ։ 1806 թվականին նա Նապոլեոնին պաշտոնապես ճանաչեց Ֆրանսիայի կայսր։ Թյուրքիան Նապոլեոնի ձեռքին գործիք դարձավ՝ Ռուսաստանի դեմ պայքարելու համար։

Ռուսաստանի նկատմամբ Թյուրքիայի թշնամական դիրքը էլ ավելի բացահայտ բնույթ ստացավ 1806 թվականի ամառվա վերջում, երբ Կոստանդնուպոլիս ժամանեց Նապոլեոնի ճարպիկ և խարդախ դեսպանորդ գեներալ Սե-

բաստյանին, որը գործում էր Ռուսաստանի դեմ Նապոլեոնի կողմից նրան հատկապես տրված գաղտնի հրահանգի համաձայն[1]։

Նապոլեոնը Սեբաստյանիին պատվիրել էր ամենից առաջ «Բարձր Դռանը վստահություն ներշնչել, որ Ֆրանսիան ցանկանում է միայն Թյուրքիայի ուժեղացումը»։ Այնուհետև դեսպանին հրահանգվում էր հասնել Ռուսաստանի դեմ ուղղված եոյակ ռազմական դաշինքի (Ֆրանսիա, Օսմանյան կայսրություն և Իրան)։ Նապոլեոնը պահանջում էր նաև փակել Բոսֆորը Ռուսաստանի համար, արգելել ռուսական նավերի մուտքը թյուրքական բոլոր նավահանգիստները, Դռան իշխանությանը վերադարձնել Մոլդավիան և Վալախիան։ Վերջապես, հրահանգի վերջում Նապոլեոնը կեղծավորաբար ազդարարում էր, թե ինքը ամենևին էլ չի ձգտում անդամահատել Օսմանյան կայսրությունը և երկերեսանիորեն հայտարարում էր, որ, եթե իրեն առաջարկեին նրա բոլոր տիրապետությունների երեք քառորդը, իբր թե ինքը կտրականապես կհրաժարվեր դրանցից։ Նապոլեոնը հավաստիացնում էր, թե ինքը ձգտում է լոկ ամրապնդել թյուրքական մեծ տերությունը և այն հակադրել Ռուսաստանին[2]։

Թյուրքիայում երևացին ֆրանսիական շատ սպաներ, որոնք սկսեցին մարզել թյուրքական բանակը։ Ֆրանսիացի ռազմական ինժեներների հսկողության տակ այստեղ սկսեցին ստեղծել ռազմական կառուցումներ և ամրոցներ։ Ֆրանսիական դիվանագետները ոչնչից չէին խորշում, որպեսզի ընդհարում հրահրեին Թյուրքիայի և Ռուսաստանի միջև։ Թյուրքիայի կողմից Ռուսաստանին պատերազմ հայտարարելը (1806 թ. դեկտեմբեր) մեծ չափով Նապոլեոնի գործակալների մեքենայությունների հետևանքն էր։

Թյուրքիայի դեմ մղված պատերազմը վատացրեց Ռուսաստանի դրությունն Անդրկովկասում, քանի որ Ռուսաստանը միաժամանակ դեռևս պատերազմի վիճակում էր գտնվում Իրանի հետ։ Թյուրքերի հետ խաղաղ հարաբերությունների խզումը, նշանակում էր Անդրկովկասում պատերազմ մղել երկու ճակատով։ Այդ պատճառով Կովկասյան բանակի հրամանատար գեներալ Գուդովիչը Իրանի հետ հաշտության բանակցություններ սկսեց, նախնական պայման դնելով, որ Երևանի ու Նախիջևանի խանությունները միացվեն Ռուսաստանին և ռուս-իրանական սահմանագիծը հաստատվի Քուռ և Արաքս գետերով։

Սակայն ֆրանսիական գործակալների դրդմամբ իրանական արքունիքը՝ ի դեմս մեծ վեզիր Միրզա-Շաֆիի, մերժեց ռուսական կառավարության առաջարկած հաշտության պայմանները։ Դեռ ավելին, Իրանի կառավարությունը կարծում էր, թե կկարողանա ռուսներին հեռացնել Անդրկովկասից։ Նապոլեոնը Ֆաթ-Ալի շահին խոստացավ «օգնել» Իրանի երբեմնի մեծությունը վերականգնելու գործում և նույնիսկ վերադարձնել մի ժամանակ Իրանի իշխանության տակ գտնված Միջագետքի մարզերը, Բաղդադի հետ միասին։

Նապոլեոնի հիմնական խնդիրն էր՝ ստեղծել թյուրք-իրանական ամուր ռիգա և՛ Ռուսաստանի դեմ, և՛ Անգլիայի դեմ։ Իրանի շահը այդ նպատակով հատուկ դեսպան ուղարկեց Կոստանդնուպոլիս, որպեսզի թյուրքական սուլթանին ներշնչի, թե իրանցիներն ունեն ռազմական խոշոր ուժեր, մի քանի

---

[1] Տե՛ս „История XIX века" под ред. Лависса и Рамбо, т. II, стр. 123—124, Մ. 1937։

[2] Տե՛ս E. Driault, La politique orientale de Napoleon, Sébastiani et Gardane (1806—1808), p. 60, Paris, 1904.

դանակներ, որոնք պատրաստ են պատերազմական ակտիվ գործողություններ ծավալելու ռուսների դեմ։ Իրանի դեսպանը Թյուրքերին հավաստիացնում էր, թե շահի հրամանատարության ներքո կան 100 հազար լավ մարզված ու զինված ռազմիկներ, Աբբաս-Միրզայի հրամանատարության տակ՝ 40 հազար, Ահմեդ Վելի-Միրզայի հրամանատարության տակ՝ 30 հազար, Իբրահիմ խանի հրամանատարության տակ՝ 20 հազար։

Ֆրանսիական դիվանագետ Ժոբերը, որին Նապոլեոնը 1805 թվականին ուղարկել էր Իրան՝ դաշինք կնքելու նրա հետ, գրում էր, որ Բաբա-խանը (Ֆաթ-Ալի շահը) ռուսների անհաշտ թշնամին է։ Ժոբերը իրանական հեծելազորը հիանալի էր համարում, թեև նշում էր, որ նա ի վիճակի չէ կռվելու ռուսների դեմ։ Իրանական զորքերի թիվը, Ժոբերի կարծիքով բավական էր Ռուսաստանին թուլացնելու համար։ Դրա հետ մեկտեղ Ժոբերը նշում էր, որ Բարա-խանը ունի զգալի քանակությամբ հրետանի և ամեն տեսակ ռազմամթերք։ Նա չունի միայն հրետաձիգներ (թնդանոթաձիգներ), որոնցով նրան կարող է ապահովել Ֆրանսիան[1]։

Ֆրանս-իրանական բանակցություններն ավարտվեցին նրանով, որ Իրանի կառավարությունը դեսպան ուղարկեց Նապոլեոնի մոտ՝ պաշտոնական պայմանագիր կնքելու հատուկ լիազորություններով։ Նապոլեոնը, որ այդ ժամանակ գտնվում էր Ֆինկենշտայնի մոտի ճամբարում, 1807 թվականի ապրիլի 25-ին մեծ հանդիսավորությամբ ընդունեց Իրանի դեսպան Միրզա Ռիզա-խանին։ Ի պատիվ նրա՝ երկու օր շարունակ զորահանդեսներ էին կազմակերպվում։ Մայիսի 4-ին Ֆրանսիայի և Իրանի միջև դաշնագիր ստորագրվեց։

Նապոլեոնը «երաշխավորում էր» Իրանի տերիտորիալ անձեռնմխելիությունը գոյություն ունեցող սահմաններում և Վրաստանը ճանաչում էր Իրանի սեփականություն, ուստի և պարտավորություն ստանձնեց ամեն կերպ աջակցել Վրաստանից ռուսներին դուրս մղելու գործին։ Ընդ որում Ֆրանսիան պարտավորվում էր Իրանին մատակարարել այնքան թնդանոթներ ու հրացաններ, ինչպես նաև հրետանավորներ ու ռազմական ինժեներներ, որքան շահը անհրաժեշտ կհամարի իր բանակը վերազինելու համար։ Իր կողմից, շահը պետք է խզեր քաղաքական ու առևտրական բոլոր կապերը Անգլիայի հետ, թույլ չտար անգլիական նավերի մուտքը իրանական նավահանգիստները և, ենթարկվելով «կոնտինենտալ բլոկադայի» կանոններին, արգելեր անգլիական ապրանքների մուտքը իրանական շուկաները։ Նա պարտավորվում էր նաև թույլ տալ ֆրանսիական նավատորմին ազատորեն մտնելու Պարսից ծոցը և նրան ցույց տալ ամեն տեսակ աջակցություն, ինչպես նաև օգնել այն դեպքում, երբ անհրաժեշտ կլինի ֆրանսիական բանակը շարժել դեպի Հնդկաստան։ Հատուկ կետով նախատեսվում էր ֆրանս-իրանական առևտրական համաձայնագրի կնքում։

Իրան ժամանեցին ֆրանսիական սպաներ, որոնք սկսեցին վարժեցնել զորքերը և ամրոցներ կառուցել։ Ֆրանսիական ինժեներները մասնակցում էին նաև Երևանի բերդում նոր ամրությունների կառուցմանը։

Այդ առթիվ գեներալ Գուդովիչը գրել է. «Երևանի բերդը ամրացված է եվրոպական ռազմական բոլոր կանոններով, ունի երկու պատ և դրանց առջև՝

[1] Տես „Акты, собранные Кавказскою археографическою комиссией" (հետագայում՝ Акты), հ. III, էջ 424։

խանդակ ու շեղապատնեշ։ Խանդակում դրված էին թնդանոթներ ու գործում էին կարտեչով, մի բան, որ առաջ պարսիկները երբեք չէին անում։ Կայինները նաև ֆուգասներ և ռումբեր՝ մոտեցված լաստակներով, ուստի և այլևս չի կարելի կասկածել, թե ինչ պատճառով հատկապես Երևան և Էջմիածնի վանքն է ուղարկվել ֆրանսիական ինժեներային կապիտանը, որը այս վայրերում է եղել նախքան զորքերի հետ իմ գալը Երևանի մարզը, և որի մասին ես դեռ առաջ էլ հաղորդել եմ»[1]։

Բերված փաստերը վկայում են, որ XIX դարի սկզբից Անգլիան և Ֆրանսիան սկսեցին ակտիվ միջամտություն ցույց տալ ինչպես Իրանի և Թյուրքիայի, այնպես էլ Անդրկովկասի գործերին։

Հայաստանը Ռուսաստանին միացնելու կամպանիան համընկավ այն ժամանակին, երբ եվրոպական զավթիչ-տերությունների միջև սրվել էին հակասությունները Մերձավոր Արևելքում ազդեցություն ձեռք բերելու համար։ Գտնվելով անհաշտ թշնամության մեջ՝ Անգլիան և Ֆրանսիան միևնույն ժամանակ Արևելքում մշտապես վարում էին հակառուսական քաղաքականություն։ Որոշ ժամանակաշրջաններում «դաշինքի» մեջ գտնվելով Ռուսաստանի հետ՝ այդ տերությունները քողարկված և երկերեսանի քաղաքականությունից անցնում էին բացահայտ թշնամական հակառուսական քաղաքականության։

Նապոլեոնի և Ալեքսանդր I-ի միջև 1807 թվականին Տիլզիտում կնքված հաշտության և «դաշինքի» պայմանագրից հետո Ռուսաստանի և Թյուրքիայի միջև ժամանակավոր զինադադար տեղի ունեցավ։ Ֆրանսիական և անգլիական գործակալները Թյուրքիայում չդադարեցրին Ռուսաստանի դեմ ուղղված իրենց ինտրիգները։ Նապոլեոնը չէր մտածում համաձայնվել բաժանելու ծվենակազմ Օսմանյան կայսրությունը, որի ճնշված ժողովուրդներն արթնանում և ձգտում էին ազատագրվել թյուրքական լծից։ Եթե այդ բաժանումը ցարական Ռուսաստանին ձեռնտու էր, ապա Նապոլեոնի հաշիվների մեջ այն չէր մտնում։ Ֆրանսիական կառավարությունը չէր պատրաստվում նաև Ռուսաստանին զիջել սևծովյան նեղուցները։

Լավ չէր իրերի վիճակը նաև Իրանում։ Այնտեղ նշանակված գեներալ Գարդանը՝ իրանական արքունիքին կից ֆրանսիական «դաշնակցային» միսիայի ղեկավարը, դժվարին կացության մեջ ընկավ Տիլզիտում կնքված պայմանագրի հետևանքով, որը օբեկտիվորեն հակասում էր Ֆինկենշտայնի մոտ կնքված ֆրանս-իրանական պայմանագրին։ Սակայն ֆրանսիացիները բոլոր ջանքերը գործադրում էին, որպեսզի Իրանը ենթարկեն իրենց, նրան զինեն Ռուսաստանի դեմ հաջողությամբ պատերազմելու համար, նրա օգնությամբ արշավանք նախապատրաստեն դեպի Հնդկաստան և, որ գլխավորն է, Ռուսաստանին դուրս մղեն Անդրկովկասից։

1808 թվականի մայիսին Թավրիզ ժամանեց ռուսական բանակի սպա բարոն Վրեդեն, որին Գուդովիչը ուղարկել էր վերսկսելու Ռուսաստանի և Իրանի միջև հաշտություն կնքելու բանակցությունները։ Ռուսաստանի ներկայացուցչին հաստատուն ցուցումներ էին տրվել, որ հաշտություն կնքելու հիմնական նախադրյալն է Երևանի ու Նախիջևանի խանությունների միացումը Ռուսաստանին։ Բայց շահը վճռականապես մերժեց ցարի պահանջը և դիմեց Դարդանին՝ խնդրելով աջակցել Ֆինկենշտայնի համաձայնագրի կետերի իրա-

[1] Акты, հ. III, էջ 254։

գործմանը։ Սակայն Գարդանի բոլոր բանակցություններն ու ինտրիգները արդյունք չավին։ Գեներալ Գարդանի և նրա միսիայի հակառուսական գործունեությունը Իրանում ոչ ոքի համար գաղտնիք չէր։

Ցարին ուղարկած զեկույցներից մեկում Գուդովիչը գրել է. «Պարսկաստանում ֆրանսիական միսիան, չնայած մեզ հետ ունեցած բարեկամական դաշինքին, այժմ ավելի շատ է վնասում Պարսկաստանի հետ ունեցած իմ գործերին, քան թե այդ անում էին նրանք առաջ, Ֆրանսիայի դեմ պատերազմելու ժամանակ։ Որովհետև նրանք գոռոզամիտ են դարձրել Բաբա-խանին, պարսկական կառավարությանը գրում ու հավատացնում են, թե կանեն ամեն բան, ինչ որ ցանկանան։ Պարսկաստանում ֆրանսիական դեսպան գեներալ Գարդանի իսկական նամակից, որ գրված է թաթարերեն, ստորագրված դեսպանի կողմից և ուղղված է Բաբա-խանի որդի Աբբաս-Միրզային և որը սարդար Հյուսեյն Կուլի-խանի ջախջախումից հետո իմ ձեռքն ընկավ, նրանից գրավված ամբողջ գրասենյակի հետ միասին, դուք կհաճեք ավելի լավ նկատել, թե ֆրանսիական միսիան որքան է ինձ խանգարում հաջողությամբ ավարտելու Պարսկաստանի հետ շարունակվող գործը։ Հենց նրանք էին, որ այն ժամանակ, երբ ես զորքերիս հետ միասին շարժվում էի դեպի Փամբակ և նախքան ես կմտնեի Երևանի սահմանները, Վերդյե ազգանունով մի ինժեներային սպայի և ուրիշների ուղարկել էին Երևանի բերդը և Էջմիածնի վանքը՝ դրանք զննելու և ամրացնելու համար»[1]։

Հետաքրքրական են նաև Գուդովիչի այլ հաղորդումները Իրանում ֆրանսիական մեքենայությունների մասին։ «Գեներալ Գարդանը, տեսնելով, որ իմ բոլոր գործողությունները չեն համապատասխանում այն հավաստիացումներին, որ նա, ի վնաս Ռուսաստանի շահերի, տալիս է պարսկական մինիստրությանը, իր նկատմամբ վստահություն պահպանելու համար դիմել է վերջին վճռական միջոցին, որպեսզի այն պատրվակով, թե Ֆրանսիան երաշխավորել է պահպանել պարսկական նահանգների ամբողջականությունը (թեև այդ երաշխավորությունը խոստացվել է Ռուսաստանի և Ֆրանսիայի միջև մղված պատերազմի ժամանակ), ինձ համոզի վերջ տալու պատերազմական գործողություններին և զորքերի հետ միասին դուրս գալու Երևանի մարզից, այն ժամանակ, երբ ես ռուսական զենքի ուժով արդեն իմ ձեռքում ունեի (բացի միայն Երևանի բերդից) բոլոր այն սահմանները, որոնք բարձրագույն հրամանով ես պահանջել էի Պարսկաստանից։

Այս իսկ առաջարկով ինձ մոտ էր ուղարկվել ֆրանսիական դեսպանության քարտուղար պարոն Լաժարը, գեներալ Գարդանից լիազորություն ունենալով բողոքել իմ դեմ, եթե ես չհամաձայնվեմ նրա առաջարկներին։

Ավելորդ կլիներ այստեղ երկար կանգ առնել այն խոսակցության վրա, որ ես ունեցա նրա հետ այդ առթիվ և այն փաստարկների վրա, որոնցով պարզ կերպով ապացուցեցի, թե որքան այդ առաջարկները չեն համապատասխանում այն անկեղծ բարեկամությանն ու սերտ կապին, որ գոյություն ունի համայն Ռուսիայի կայսրության և Ֆրանսիայի միջև։ Ամենահարգանոք ավելացնում եմ, որ ես բոլորովին լռեցրի Լաժարին, ցույց տալով նրան Պարսկաստանի հետ մեր գործերի ամբողջ ընթացքը և ստիպեցի նրան ոչ միայն խոստովանել, որ նրա այդպիսի բողոքը տեղին չէ, այլև այնպես

[1] Центральный государственный Военно-исторический архив (ЦГВИА). Ф. Военно-учебного архива (ВУА), д. 4265, лл. 17—18.

արեցի, որ նա ինքը այս դեպքում խոստովանեց իր մինիստր գեներալ Գարդանի սխալը։ Հետո քանն այնտեղ հասցրի, որ նա ինքը, առանց իմ պահանջի, հանձն առավ գրել Երևանի բերդի պարետին, որ, թեև ինքը ուղարկված է եղել ինձ մոտ, որպեսզի ինձ համոզի դադարեցնել պատերազմական գործողությունները և զորքերի հետ միասին դուրս գալ Երևանի մարզից,— բայց քանի որ նա իմ կողմից վճռական անհամաձայնության հանդիպեց, ուստի թող բերդը իր վրա այլևս հույս չդնի և որ ինքը այլևս չի կարող գործել նրա օգտին»[1]։

1812 թվականին Ֆրանսիայի վճռական պարտությունից հետո, իրանա-թյուրքական լծից Հայաստանի ազատագրման դեմ գործող հիմնական ռեակցիոն ուժը մնաց Անգլիան։

Ջանդրադառնալով անգլո-իրանական հարաբերությունների ավելի հեռավոր պատմությանը, հիշենք, որ արդեն 1801 թվականին անգլիացիները Իրանի հետ ստորագրեցին մի քաղաքական պայմանագիր, որի համաձայն Իրանը պարտավորություն ստանձնեց դուրս գալ Աղվանստանի դեմ, եթե աղվանական ուժերը փորձեն ներխուժել Հնդկաստան։

Այդ պայմանագիրը իր սուր ծայրով ուղղված էր նապոլեոնյան Ֆրանսիայի դեմ, որի ներկայացուցիչներին Իրանը պարտավորվեց թույլ չտալ իր տերիտորիան։ Իսկ Անգլիան, ըստ 1801 թվականի պայմանագրի, Ֆրանսիական էքսպանսիայի դեպքում, պետք է զենք մատակարարեր Իրանին։

Կ. Մարքսը «Ժամանակագրական քաղվածքներ Հնդկաստանի պատմության վերաբերյալ» աշխատության մեջ այդ պայմանագրի մասին գրել է հետևյալը. «Նապոլեոնը ինտրիգներ էր վարում նաև Արևելքում. Կալկաթայի «չարչիները» դողում էին Ֆրանսիա, Պարսկաստան, Աղվանստան կոմբինացիայի հանդեպ։ Դրանով է բացատրվում կապիտան Մալկոլմի գլխավորությամբ Պարսկաստան դեսպանությունն ուղարկելը (դա) չափազանց շատ փող նստեց, նա «գնում է» ամեն ինչ «սկսած շահից, մինչև ուղտապանը». նա հաջողացրեց Թեհրանում կնքել հետևյալ պայմանագիրը՝ պարսկական շահը Պարսկաստանից արտաքսում է բոլոր ֆրանսիացիներին, դադարեցնում է ամեն տեսակ հարձակումները Հնդկաստանի վրա և անհրաժեշտության դեպքում արգելք է հանդիսանում այդպիսի հարձակումներին զենքի ուժով. ստարերկրյա առևտրում հովանավորություն է ապահովում բացառապես անգլիացիներին»[2]։

Անգլո-իրանական այդ պայմանագիրը պոտենցիալ կերպով ուղղված էր նաև Ռուսաստանի դեմ։ 1804—1813 թթ. ռուս-իրանական առաջին պատերազմի ժամանակ Անգլիան Իրանի կողմն էր և ձգտում էր, որ Ռուսաստանը պարտվի ու դուրս մղվի Անդրկովկասից։

Տիլզիտի համաձայնագիրը և ֆրանս-ռուսական մերձեցումը թուլացրին 1807 թվականի ֆրանս-իրանական դաշինքի նշանակությունը, որից չհապաղեց օգտվել անգլիական կառավարությունը։ 1809 թվականի փետրվարին Թեհրան ժամանած անգլիական ներկայացուցիչ Գ. Ջոնսը իր կառավարության անունից պարտավորվեց շահին տարեկան վճարել 160 հազար թուման, իրանական բանակին մատակարարել զենք, ռազմամթերք և զինվորական

[1] ЦГВИА, ф. ВУА, д. 168, лл. 11—17.

[2] К. Маркс, Хронологические выписки по истории Индии, стр. 105, Огиз-Госполитиздат, 1947.

հրահանգիչներ։ Գարդանի միսիան Իրանից հեռացավ, Գ. Ջոնսի և շահի ներկայացուցչության միջև ստորագրվեց նախնական պայմանագիր, որի իմաստը Իրանի ենթարկումն էր Անգլիային։ Պայմանագիրը ամենից առաջ ուղղված էր Ռուսաստանի դեմ։ Իրանը կապերը խզեց Անգլիային թշնամի բոլոր պետությունների հետ և պետք է լարեր ուժերը, որպեսզի պարտության մատներ ռուսներին ու նրանց դուրս մղեր Անդրկովկասից։

Նույնիսկ անգլիական պատմաբանները, որոնք ամեն կերպ խեղաթյուրել են ռուս-իրանական հարաբերությունների իսկական պատմությունը, չեն կարողացել չխոստովանել, որ Անգլիան իսկապես Իրանին Ռուսաստանի դեմ հրահրողի դեր է խաղացել։ Այսպես օրինակ, Սայքսը գրել է. «Ջոնսը նշեց... որպեսզի Ռուսաստանի ձեռքերը կաշկանդի... Նա առաջարկեց Մեծ Բրիտանիայի դաշինքը և տարեկան 160 հազար թուման (120 հազար ֆունտ ստերլինգ) օժանդակություն Ռուսաստանի դեմ մղվող պատերազմի ընթացքում և դրա հետ միաժամանակ բրիտանական սպաների ծառայությունները պարսկական բանակի ղեկավարության ասպարեզում, այն ժամանակ Ֆաթալի շահը համաձայնվեց գեներալ Գարդանին տալ նրա անձնագրերը»[1]։

1811 թվականին գեներալ Տորմասովը, նշելով Իրանի ֆրանսիական և անգլիական «հովանավորների» միջև եղած հաջորդական կապը, զինվորական մինիստրին գրել է. «Անգլիայի ազդեցության տակ (Իրանը— Ջ. Գ.) կազմավորում է սարբազներ կոչված կանոնավոր զորքեր, որոնց առաջ մարզում էին ֆրանսիական սպաները, իսկ այժմ՝ անգլիական սպաները։ Այս վերջիններս ձուլում են նաև թնդանոթներ, մատակարարում են անգլիական հրացաններ, սովորեցնում են հրետանավորներին և շատ տեղերում ամրություններ են կառուցում»[2]։

Անգլիացիները ոչ միայն ձգտում էին իրանցիների ձեռքով իրագործել իրենց զավթողական պլանները Անդրկովկասում, այլև երկիրը խճճել պարտքերի մեջ, զավթել իրանական շուկան և Իրանը դարձնել գաղութ։ Այդ նպատակով նրանք արհեստականորեն պահպանում էին երկրի ֆեոդալական մասնատվածությունը, զանազան պրովոկացիաների միջոցով հակասություններ էին հրահրում ֆեոդալական տարբեր կլիկների միջև և ամեն կերպ նպաստում էին ներքին երկպառակություններին։

1809 թվականից Անգլիան սկսեց Իրանին ուժեղ թափով մատակարարել զենք, դրամ ու զինվորական հրահանգիչներ և իրագործում էր իրանական կանոնավոր բանակի ստեղծումը։ Անգլիական նոր դեսպան Օուզլին շահին հանձնեց 600 հազար թուման։ Իրանական բանակն ստացավ մի քանի հազար անգլիական հրացան, զգալի քանակությամբ թնդանոթ և ռազմամթերք. Իրան ժամանած անգլիական սպաները աչքի ընկնող պոստեր գրավեցին իրանական բանակում։ Անգլիայի կողմից Իրանին ցույց տրվող ռազմական օգնությունն օրեցօր աճում էր։ Այդ է վկայում, օրինակ, գեներալ Տորմասովին ուղղված կապիտան-լեյտենանտ Զելևի 1810 թվականի հունվարի 29-ի զեկույցը՝ «Թաւրիզում իմ գտնված ժամանակ,— գրել է Զելևը,— իմացա, որ Բենդեր-Բուշիրով Պարսկաստան է ժամանել անգլիական զորք 3.000, նրանց հետ հարյուր սլոնձե թնդանոթ, 2.000 հրացան, 1.200.000 դրամ, թնդանոթ ձուլող և նավեր կառուցող գանական վարպետներ, ինչպես օրինակ՝ Աստրաբադում, Մազան-

[1] Sykes, A history of Persia, vol. II, p. 405, London.
[2] Акты, т. IV, стр. 756.

պարանում, Գիլյանում և Լենգերուդում»[1]։ Նույնն է վկայում նաև կոմս Ռումյանցևին ուղղված գեներալ Ռտիշչևի 1812 թվականի զեկույցը, որի մեջ հաղորդվում էր, որ «Պարսկական զորքերի կրած ուժեղ պարտության ժամանակ նրանց կանոնավոր հետևակին և պատերազմական բոլոր գործողությունները ղեկավարում էր անգլիական մայոր Կրիսսատին... իսկ անգլիական հրետանին, որ խլվել է պարսիկներից, նույնպես ղեկավարում էր անգլիական ծառայության հրետանային կապիտան Լենդսեյը»[2]։

Անգլիան նույնանման օգնություն էր ցույց տալիս նաև թյուրքական պետությանը, որը 1806 թվականի վերջից պատերազմում էր Ռուսաստանի դեմ։ 1809 թվականին Անգլիան պայմանագիր կնքեց Թյուրքիայի հետ և եռանդուն կերպով աջակցում էր Ռուսաստանի դեմ ուղղված թյուրք-իրանական ռազմական դաշինքի ամրապնդմանը։ Անգլիան թյուրքերին մատակարարում էր զրահ, զենք, զինվորական հրահանգիչներ։ Նրա գործակալները լրտեսություն էին կատարում Թյուրքիայի օգտին, թյուրքական հրամանատարությանը հաղորդելով կարևոր տեղեկություններ։

1809 թվականին գեներալ Տորմասովը կոմս Ռումյանցևին հաղորդում էր. «Կոստանդնուպոլսից այստեղի թյուրքական փաշալիկներն են գալիս անգլիացիներ, բայց իմ լրտեսները նրանց տեսել են զանազան տեղերում, իսկ առավելապես՝ Էրզրումում, սպասում են, որ Թյուրքիայի վրայով Երևան ևս ժամանելու են ինչ-որ եվրոպացիներ, հավանաբար, նույնպես անգլիացիներ և պետք է կարծել, որ նրանք աշխատում են ոսկու միջոցով Վրաստանի այս հարևաններին պատերազմի գրգռել ռուսական զորքերի դեմ»[3]։

Որպես թե պաշտպանելով Թյուրքիայի «անկախությունն ու տերիտորիալ ամբողջականությունը», Անգլիան հետապնդում էր միայն մեկ նպատակ՝ իր ձեռքը գցել թյուրքական ֆեոդալական ամբողջ ծվենակազմ կայսրությունը։ Յանկանալով արգելք հանդիսանալ իր մրցակցի՝ ցարական Ռուսաստանի Թյուրքիա ներթափանցելուն, Անգլիան հանդես էր գալիս որպես պաշտպան թյուրքական արյունոտ բռնակալության, ոչ-թյուրք ճնշված ժողովուրդների և մասնավորապես հայ ժողովրդի նկատմամբ կիրառվող նրա բնաջնջող քաղաքականության։ Անգլիան հանդես էր գալիս որպես թյուրքական կեղեքման դեմ ապստամբած, իրենց ազատության և ազգային գոյության համար պայքարի ելած ժողովուրդների ոխերիմ թշնամի։

Իր շահամոլ գաղութարարական նպատակներով Անգլիան պաշտպանության տակ էր առնում Թյուրքիային և Իրանին՝ այդ երկու ծայրաստիճան հետամնաց ֆեոդալական-բռնակալական պետություններին, որոնք գործադրում էին այդ երկրներում բնակվող ժողովուրդներին շահագործելու և ստրկացնելու ամենավայրագ ձևերը։ Դեռ ավելին. անգլիական գաղութարարները 1809 թվականին գործադրում էին բոլոր ջանքերը, որպեսզի օգնեն Իրանին՝ զավթելու Վրաստանը։

Անդրադառնալով այդ հարցին՝ գեներալ Տորմասովը կոմս Ռումյանցևին գրել է. «...վերջերս Անգլիայից Պարսկաստան է եկել դրամական մեծ գումարով մի նոր դեսպան ևս, և ամեն կերպ ջանում է ներշնչել պարսիկներին, թե հնարավոր է տիրել Վրաստանին, դրա համար խոստանալով դրամական

[1] Акты, т. IV, стр. 591.
[2] Նույն տեղում, հ. 5, էջ 690։
[3] Նույն տեղում, հ. 4, էջ 935—936։

օժանդակություն, և պարսկական կառավարությանն առաջարկում է Ս. Պետերբուրգ ուղարկել մի խանի, առաջարկելով, որ Ռուսաստանը թողնի Վրաստանը և վերադարձնի Պարսկաստանից նվաճված վայրերը, ապա թե ոչ պարսկական կառավարությունը կաշխատի դրանք վերադարձնել զենքի ուժով»[1]։

Ռուսական զորքերին պարտության մատնելու և անդրկովկասյան հողերը խլելու համար անգլիական գործակալները, որոնք առատորեն վարձատրվում էին Օստ-Ինդիայի ընկերության ոսկով, ձգտում էին ապստամբություններ ու խռովություններ հրահրել ռուսական բանակի թիկունքում։ Գեներալ Ա. Պ. Տորմասովը 1811 թվականին զինվորական մինիստրին հաղորդում էր այն քայքայիչ գործողությունների մասին, որ ռուսական զորքերի թիկունքում կատարում էին անդրկովկասյան զանազան մանր-մունր ֆեոդալական իշխաններ, «որոնց պարսկական կառավարությունը անգլիական ոսկու օգնությամբ դրդում է խռովությունների ու ապստամբությունների, իսկ ն. կ. մ. զորքերին հարկադրում է ամենուրեք գտնվել պաշտպանողական վիճակում»[2]։

Ֆրանս-ռուսական հարաբերությունների արագ վատթարացումը և Նապոլեոնի հետ անխուսափելի ընդհարման մոտեցումը Ռուսաստանին ստիպում էին շտապեցնել դադարեցնելու Իրանի և Թյուրքիայի դեմ մղվող պատերազմը։

Այդ պայմաններում անգլիացիները բազմիցս վիժեցրին հաշտության բանակցությունները Ռուսաստանի և Իրանի միջև։ Նրանք իրանական կառավարությանը ոգեշնչում էին Իրանի դեմ կռվող ռուսական զորքերի թուլացման հեռանկարով։ Գեներալ Տորմասովը 1810 թվականին կոմս Ռումյանցևին հաղորդում էր, որ «Պարսկաստանի հետ զինադադար կնքելու անհաջողությունը պետք է վերագրել միմիայն Անգլիայի ջանքերին, որն աշխատում է ամեն տեսակ խոչընդոտներ հարուցել, որ և նրան հաջողվել է առատորեն շաղ տրված ոսկու օգնությամբ»[3]։

Վիժեցնելով հաշտության բանակցությունները՝ Անգլիան Իրան էր ուղարկում զենքի և դրամի նոր բեռներ և թագաժառանգ Աբբաս-Միրզային դրդում էր վճռական պատերազմական գործողությունների ռուսների դեմ։ «Թավրիզում գտնվող անգլիացիները,— գրել է գեներալ Տորմասովը կոմս Ռումյանցևին 1811 թվականին,— ամենայն եռանդով վարժեցնում են պարսկական հրետանավորներին և Պարսկաստանի գահաժառանգից պահանջում են, որ ավելի շատ զորք հավաքելով անպայման շարժվի դեպի մեր սահմանները և վճռական գործողություններ կատարի»[4]։

1811 թվականի մայիսի 13-ին Տորմասովը Մ. Ի. Գոլենիշչև-Կուտուզովին հաղորդում էր. «Անգլիան, որ պարսկական կառավարությանը շլացնում է առատաձեռնությամբ շաղ տրվող իր ոսկով, նաև ամեն կերպ ճգնում է Պարսկաստանին տրամադիր պահել մեր դեմ պատերազմելու և ամեն կերպ նրան նպաստում է բազմապատկելու կանոնավոր զորքերը Պարսկաստանում։

Անցյալ տարի Անգլիայից Պարսկաստան էր բերվել մոտ 20 հազար եվրոպական հրացան, իսկ այժմ ես հավաստի տեղեկություններ եմ ստացել, որ Պարսկաստանում անգլիական գործակալ Հարֆորդ Ջոնեսի (Ջոնսի— Ջ. Գ.) փոխարեն ժամանել է նոր լիազոր-մինիստր, որի անունը դեռ չգիտեմ։

---

[1] Акты, т. IV, стр. 698.
[2] Նույն տեղում, էջ 756։
[3] Նույն տեղում, էջ 595։
[4] Նույն տեղում, էջ 755։

Նրա բազմամարդ շքախմբում կան մեծ թվով ինժեներային և հրետանային սպաներ, որոնք եռանդով զբաղվում են պարսկական զորքերի վարժեցումով, ինչպես նաև թնդանոթներ ձուլելով, ամրոցներ վերանորոգելով և նորերը կառուցելով»[1]։

1811 թվականին Անգլիան զգալիորեն ավելացրեց Իրանի վաճառված կառավարողներին տրվող տնտեսական և ռազմական օգնության չափերը։ Նա Իրանին տրամադրեց նոր խոշոր փոխառություն, որով իրանական կառավարությունը Անգլիայում գնեց 12 թնդանոթ, 12 հազար հրացան, 12 հազար զինվորի զգեստավորման համար մահուդ և 12 հազարանոց բանակին անհրաժեշտ ամբողջ ռազմամթերք։

Անգլիական լրտեսներն ու դիվերսանտներն ուղարկվում էին ռուսական զորքերի գրաված տերիտորիան։ Մ. Ի. Գոլենիշչև-Կուտուզովին 1811 թվականին ուղղված նամակում գեներալ Տորմասովը գրում էր. «...Բաբա-խանի այս դեսպանության շքախմբում նկատվել է մի ծպտյալ անգլիացի, որը կատարելապես տիրապետում է պարսկերեն լեզվին և որը դաղտնի կերպով նկարահանում էր Թալիշի տեղադրությունը»[3]։

1812 թվականի հունիսին Նապոլեոնը ներխուժեց Ռուսաստան։ Սկսվեց ռուս մեծ ժողովրդի Հայրենական պատերազմը ֆրանսիական զավթիչների դեմ։

Անգլիան Ռուսաստանի հետ դաշինքի և օգնության պայմանագիր ուներ։ Թվում էր, թե դրանից հետո պետք է փոխվեր նաև անգլիական քաղաքականությունը Իրանում։ Բայց այդպես չեղավ։ Բնորոշ է, որ դեռևս 1812 թվականի օգոստոսին անգլիացիներն անմիջական մասնակցություն էին ցույց տալի. ռուսական ուժերի դեմ մղվող պայքարին։ Կապիտան Վեսյոլին 1812 թ. օգոստոսի 20-ին գեներալ-մայոր Կոտլյարևսկուն գրած նամակում հաղորդում էր. որ անգլիացիները ակտիվ մասնակցություն են ցույց տվել Լենքորանի ամրոցի գրոհին։ «Անգլիացիները,— գրել է նա,— իրենց առաջապահ զորքով և 6 ֆունտ տրամաչափի 8 թնդանոթով նետվեցին մեր կողմից ամրացված դիրքի վրա, հույս ունենալով մեկ հարվածով խորտակել այն պատնեշը, որը թաքցնում էր ինձ վստահված ջոկատը և խանին՝ իր փոքրաթիվ մերձավորներով, բայց, հակառակ իրենց ցանկության՝ ետ մղվեցին նավերի ծովային հրետանու կողմից, իրենց համար զգալի կորուստով»[4]։

Ասլանդուզի ճակատամարտից (1812 թ. հոկտեմբեր) մի քանի օր առաջ, ճակատամարտ, որ ավարտվեց Աբբաս-Միրզայի հիմնական ուժերի ջախջախումով և որը վճռեց 1804—1813 թթ. ռուս-իրանական պատերազմի ելքը, անգլիացիները Իրանի շահին համոզել էին մերժել ռուսական հրամանատարության հաշտության առաջարկները։

Միայն իրանական զորքերի պարտությունից և Նապոլեոնի ջախջախումից հետո անգլիական կառավարությունը երկյուղ կրելով, թե ռուսները կներխուժեն Իրանի խորքը, շտապ կերպով սկսեց հանդես գալ որպես Ռուսաստանի և Իրանի հաշտեցման «ջերմ» կողմնակից։ Այս նպատակով անգլիական գործակալները ձգտում էին մասնակցել հաշտության բանակցություններին, որ-

[1] Акты, т. IV, стр. 761.
[2] Նույն տեղում, հ. 5, էջ 177։
[3] Նույն տեղում, հ. 4, էջ 760։
[4] Նույն տեղում, հ. 5, էջ 663։

պես 3-րդ կողմ։ Ռուսական հրամանատարությունը վճռականորեն մերժեց այդ պահանջները և 1813 թվականի հոկտեմբերին Գյուլիստանում Իրանի հետ կնքեց երկկողմանի պայմանագիր։

Գյուլիստանի հաշտության պայմանագրով Իրանը ստիպված եղավ ճանաչել վրացական, ադրբեջանական և անդրկովկասյան մի շարք այլ երկրամասեր Ռուսաստանին միացնելու փաստը։ Այսպիսով, չնայած Անգլիայի բայքային բոլոր գործողություններին, Վրաստանը, Հյուսիսային Ադրբեջանը և Արևելյան Հայաստանի առանձին շրջաններ ընդմիշտ ազատագրվեցին իրանական լծից։

Ռուսաստանի կողմից 1804—1813 թվականներին պատերազմի հաղթական ավարտումը նախադրյալներ ստեղծեց՝ ապագայում ազատագրելու նաև ամբողջ Արևելյան Հայաստանը, որը շարունակում էր մնալ իրանական զավթիչների ձեռքում։

* * *

1804—1813 թվականների պատերազմում Իրանի պարտությունից հետո Անգլիան ուժեղ թափով շարունակում էր զինել նրան։ Այդ նպատակով 1814 թվականին նա Իրանի հետ պայմանագիր կնքեց։ Այդ պայմանագրով Իրանը չպետք է կապ պահպաներ Անգլիային թշնամի երկրների հետ և պարտավորվում էր Հնդկաստանի վրա որևէ տերության հարձակման դեպքում պատերազմին մասնակցել անգլիացիների կողմում։ Անգլիան իր կողմից պետք է դրամական օժանդակություն տար և օգներ Իրանին սպառազինությամբ, եթե նա հարձակման ենթարկվեր։ 1814 թվականի անգլո-իրանական պայմանագիրը աներկմիտ կերպով ակնարկում էր, որ անհրաժեշտ է վերանայել ռուս-իրանական սահմանը։

Եվ այսպես, հազիվ մի պատերազմը վերջացած, Իրանը, Անգլիայի պրովոկացիոն եռանդուն աջակցությամբ պատրաստվում էր նոր պատերազմի, որպեսզի Ռուսաստանից ետ նվաճի Անդրկովկասը։ Ցարական Ռուսաստանը, իր հերթին, միջոցներ էր ձեռք առնում, որպեսզի թուլացներ, ի չիք դարձներ անգլիական տնտեսական ու քաղաքական ազդեցությունն Իրանում. 1816 թվականին Ալեքսանդր I-ի կողմից գեներալ Երմոլովի միսիային տրված հրահանգներում ասվում էր, որ եվրոպական պետություններից Անգլիան ամենից շատ է ջանքեր գործադրել, որպեսզի իրանական կառավարությունը առավելագույն չափով ենթարկի իր ազդեցությանը։ Իր բազմաթիվ գործակալության օգնությամբ Անգլիան հասավ այն բանին, որ իր վերահսկողության տակ դրեց Իրանի ներքին կառավարման գրեթե բոլոր բնագավառները։

Երմոլովին մատնանշելով, որ Իրանում անգլիական ազդեցության հետագա աճը հղի է մեծ վտանգներով Անդրկովկասում ռուսական շահերի համար, Ալեքսանդր I-ը պահանջում էր ձեռք առնել բոլոր միջոցները այդ ազդեցությունը թուլացնելու և ի վերջո այն ամբողջովին ոչնչացնելու համար[1]։ Այդ ցուցումները իրագործելու համար ցարական ադմինիստրացիան փորձում էր Իրանում ամրապնդել իր տնտեսական ու քաղաքական դիրքերը, օգտագործելով Գյուլիստանի պայմանագրով նախատեսված արտոնությունները։

[1] Акты, т. IV, ч. II, стр. 125.

Իրենց հերթին անգլիական գործակալներն ուժեղացնում էին ճնշումը իրանական իշխանությունների վրա, որպեսզի ջլատեն ռուսական ներկայացուցիչների ակտիվությունը, սրեն ռուս-իրանական հարաբերությունները և հարմար պահին նորից ընդհարում ստեղծեն Իրանի և Ռուսաստանի միջև։

Դեկաբրիստների ապստամբությունը Իրանում ընդունվեց որպես երկարատև ներքին երկպառակության սկիզբ Ռուսաստանում։ Անգլիական պրոպագանդան լուրեր էր տարածում, թե իբր Ռուսաստանում քաոս է ստեղծվել, թե ամբողջ ռուսական բանակում խռովություններ են տեղի ունենում և այլն, և Իրանին կոչ էր անում օգտվել իր համար իբր ձեռնտու իրադրությունից և պատերազմ հայտարարել Ռուսաստանին։ Անգլիական ներկայացուցիչները շահի կառավարությանը խոստանում էին դրամ և զենք պատերազմ մղելու համար։

Անգլիական դիվանագետները, որոնք ձգտում էին Իրանը դարձնել Ռուսաստանի դեմ մղվող պայքարի գործիք և Անդրկովկաս ու Միջին Ասիա թափանցելու ռազմա-քաղաքական պլացդարմ, և այդ պատճառով Իրանում հակառուսական տրամադրություններ էին հրահրում, փոքր դեր չխաղացին պատերազմը սկսելու գործում։

Հայտնի է, որ 1826 թվականի հունիսին Ռուսաստանին հայտարարվեց «սրբազան պատերազմ»։ Շուտով Աբբաս-Միրզայի զորքերը ներխուժեցին Ռուսաստանի սահմանները։ Անգլիացիները, ինչպես և նախորդ պատերազմում, ամեն կերպ օգնում էին իրանական հարձակվող զորքերին։ Անգլիական գաղութարարների պահանջով Թյուրքական սուլթանի մոտ ուղարկվեց իրանական շահի հատուկ դեսպանություն, որի միջոցով առաջարկվում էր համատեղ գործողություններ սկսել Ռուսաստանի դեմ։

Անգլիան նորից մեծ ջանքեր գործադրեց ռուսական բանակի թիկունքում ապստամբություններ ու խռովություններ կազմակերպելու համար։ Անգլիական գործակալները թափանցում էին ամենուրեք։ Նրանք գտնվում էին իրանական արքունիքում, զորքերի շտաբներում, իրանական առանձին խանություններում, որտեղ ձգտում էին ղեկավար դեր խաղալ։ Այս կապակցությամբ հետաքրքրական է Ա. Ս. Գրիբոեդովի հիշատակությունը սարդարի օրոք Երևանի բերդում անգլիական գործակալների գործունեության մասին։ Ա. Ս. Գրիբոեդովը գրել է. «Հենց այստեղ (խոսքը վերաբերում է Երևանի բերդին— Զ. Գ.) մենք գտանք անգլիական մի տեղեկատու, ոչ թե գիրք, այլ մարդ։ Ամեն ինչի խառնվում է, ամեն ինչ ցույց է տալիս. թվում է, թե բնությունը սրան դատապարտել է մտրակ շառաչեցնելու կյուրիկելի մոտ, կամ թիավարելու Թեմզայում,— այստեղ նա ալրիոնյան շարային ուսուցումը թարգմանում է ֆարսերեն լեզվով, որը դրա համար բավականաչափ վատ գիտե. նրան վստահում են մի ամբողջ գումարտակ, կամ ավելի պակաս, համենայն դեպս նա այդպես է ասում։ Սարբազները կարգին լարախաղացներ դուրս կգան, եթե նրա ձևով կրթվեն։ Մինչդեռ նա մահու չափ ձանձրացնում է, ահա երկրորդ օրն է՝ չգիտենք, թե ինչպես ազատվենք նրանից. առհասարակ անդադրում հետաքրքրությունը և մարդուց ձեռք չքաշելը այստեղ շատ տարածված են»[1]։

Անդրկովկաս ներխուժած իրանական հրոսակախմբերը առանձնապես ան-

[1] А. Грибоедов. Сочинения, стр. 397, Л. 1945.

պուք դատաստան էին տեսնում հայ բնակչության հետ, որի համակրանքն ամբողջովին ռուսների կողմն էր։ Անգլիական հրահանգիչներն ու ռազմական ղեկտորդները ոչ առանց գոհունակության էին հետևում, թե ինչպես իրանական գաղազած զինվորները հրկիզում էին հայկական գյուղերը, մասսայական ջարդեր կազմակերպում հայկական շրջաններում։

Բայց Իրանի հաջողությունները երկարատև չեղան։ Շուտով ռուսական բանակը հարձակողական գործողություններ սկսեց։ Իրանը լիակատար պարտություն կրեց։ Այսպիսով Անգլիային չհաջողվեց իրականացնել իր ընդարձակ հակառուսական պլանները 1826—1828 թթ. պատերազմում, դեպի որը Իրանին մղեցին նրա գործակալները։ Անգլիական պլանները ձախողվեցին։ Արևելյան Հայաստանն ազատագրվեց Իրանի տիրապետությունից և միացվեց Ռուսաստանին։

Պարտություն կրած Անգլիան բոլոր ջանքերը գործադրում էր որպեսզի ուևանշի նախադրյալներ ստեղծի։ Գեներալ Պասկևիչը 1828 թվականի դեկտեմբերի 15-ին կոմս Նեսսելրոդեին գրում էր. «Անգլիական մինիստրությունը, որը Մալկոլմի դեսպանության ժամանակվանից ի վեր պարսկական արքունիքում իր ազդեցությունը պահպանելու համար ծախսել է մեր դրամով 75 միլիոն, չի խնայի ևս մի քանի տասնյակ միլիոն, որպեսզի մեր դեմ զինի Պարսկաստանին և նրան հաջողությամբ գործելու միջոցներ տրամադրի»[1]։

Թուրքմենչայի պայմանագիրը կնքելու ժամանակ (1828 թ. փետրվար) անգլիացիները նորից փորձեցին դիվանագիտական միջոցներով Ռուսաստանի ռազմական հաջողությունները եթե ոչ ի չիք դարձնել, համենայն դեպս դրանք առավելագույն չափով նվազեցնել։ Նրանք ուզում էին իրենց համար զգալի դեր ապահովել հաշտության պայմանագիր կնքելիս, որպեսզի պաշտպանեն իրենց շահերը։ Բայց ռուսական դիվանագիտությունը կանխատեսելով անգլիական մանևրները, ժամանակին անհրաժեշտ քայլեր ձեռնարկեց։ Գեներալ Պասկևիչին 1827 թվականի ապրիլի 23-ին ուղղած գրության մեջ կոմս Նեսսելրոդեն նախազգուշացնում էր, որ եթե «...Պարսկաստանի անգլիական միսիան որևէ պատրվակով ձեզ հետ գրագրություն կամ պայմանագիր կնքելու վերաբերյալ բացատրություններ սկսի, ապա համենայն դեպս ձերդ բարձր գերազանցություն, դուք մի զլանաք նրան ամենաբարեկամական արտահայտություններով ձեր կարծիքը հայտնել, բայց երբեք թույլ չտաք այդ միսիայի միջնորդությունը»[2]։

Հակառակ անգլիացիների պրովոկացիոն գործողություններին՝ Թուրքմենչայի դաշնագիրը առավելագույն չափով հաշվի էր առնում Ռուսաստանի ինչպես ստրատեգիական, այնպես էլ տնտեսական շահերը։ Նա օրինականացրեց Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին։ Արաքս գետը դարձրեց ռուս-իրանական սահման, ամենանվազագույն մաքսեր սահմանեց ռուսական ապրանքները Իրան ներմուծելու համար, որը զգալիորեն թուլացնում էր Անգլիայի տնտեսական դիրքերը Իրանում։ Ռուսաստանին բացառիկ իրավունք էր վերապահվում ռազմական նավատորմ պահել Կասպից ծովում։ Իրանի կառավարությունը պարտավորվում էր արգելք չհանդիսանալ հայերի՝ Իրանից Ռուսաստան տեղափոխվելուն։

---

[1] Акты, т. VII, стр. 667.

[2] Նույն տեղում, էջ 540։

1826—1828 թթ. ռուս-իրանական պատերազմի արդյունքներից հիասթափված, անգլիական կառավարությունը ձգտում էր վիժեցնել կնքված պայմանագիրը։ Թուրքմենչայի հաշտության պայմանագրի կնքումից արդեն քիչ հետո իրանական կառավարությունը Անգլիայի դրդմամբ փորձեց օգտագործել Ռուսաստանի այն դժվարությունները, որ առաջ էին եկել Թյուրքիայի հետ սկսված պատերազմի հետևանքով, որպեսզի խուսափեր պայմանագիրը կատարելուց։ Անգլիացիները պաշտպանում էին իրանական կառավարող շրջանների այն մասին, որը կողմնակից էր Ռուսաստանի հետ պատերազմը շարունակելուն։ Անգլիական գործակալները փորձում էին հակառուսական տրամադրություններ հրահրել և դրանով իսկ համապատասխան ճնշում գործադրել իրանական արքունիքի վրա, նրան մղել դեպի նոր պատերազմ Ռուսաստանի դեմ։

Այս կապակցությամբ պետք է կանգ առնել Իրանում ռուսական արտակարգ դեսպանորդ և մինիստր-ռեզիդենտ, ռուս մեծ գրող և ականավոր քաղաքացի, Անդրկովկասի ժողովուրդների անկեղծ բարեկամ Ալեքսանդր Սերգեևիչ Գրիբոեդովի գազանային սպանության փաստի վրա, որ տեղի ունեցավ 1829 թ. փետրվարի 11-ին։

Ա. Ս. Գրիբոեդովի ողբերգական մահվան հանգամանքները հանրահայտ են։ Ա. Ս. Պուշկինը հիշում է, որ Ա. Ս. Գրիբոեդովը 1828 թվականին Պետերբուրգից Իրան մեկնելուց առաջ վատ նախազգացում ուներ։ Ա. Ս. Պուշկինի հանդիսացուցիչ խոսքերին պատասխանելով նա ասել է. „vous ne connaissez pas ces gens-la: vous verrez qu'il faudra jouer des couteaux"[1].

Գրիբոեդովը Թեհրան ժամանեց և Թուրքմենչայի դաշնագրին համապատասխան իր պաշտպանության տակ առավ հայերին, այդ թվում երկու գերյալ կանանց Ալլայար-խանի հարեմից։ Ալլայար խանը հակառուսական պալատական պարտիայի պարագլուխն էր, սերտորեն կապված էր անգլիական ռեզիդենտների հետ, Գրիբոեդովի անձնական թշնամին էր և նրանից վրեժ էր լուծում իր անհաջողությունների և Թուրքմենչայի դաշնագրի համար։ Հայուհիները թաքնվել էին ռուսական դեսպանության շենքում։ Իրանական հոգևորականությունը Ալլայար-խանի խմբի դրդմամբ հանդես եկավ տգետ ամբոխի առաջ, կոչ անելով պաշտպանել մուսուլմանական հարեմի սրբությունը, Գրիբոեդովին մեղադրելով այն բոլոր դժբախտությունների համար, որ Իրանն ապրում էր Ռուսաստանի դեմ մղած պատերազմից հետո, որը հրահրել էին անգլիական զավթիչները։ Մոլեռանդորեն տրամադրված ամբոխը շրջապատեց դեսպանությունը և պահանջեց հայերին հանձնել։ Գրիբոեդովը պատասխանեց մերժումով։ Գազազած ամբոխը հարձակվեց դեսպանության վրա։ Ընդհարման ժամանակ զոհվեցին դեսպանության ամբողջ անձնակազմը և պահպանության 32 կազակներ։ Քաջարի պայքարում ընկավ նաև Գրիբոեդովը։ Պատահաբար փրկվեց միայն դեսպանության քարտուղար Մալցևը։

Գրիբոեդովը զոհ դարձավ իրանական ռեակցիոներների ուխտադրժության, որոնց գլխավորում էին շահն ու իր շրջապատը և որոնց դգեշնչում էին անգլիական գործակալները։ «Նրա (Գրիբոեդովի— Զ. Գ.) այլանդակված դիակը,— գրել է Ա. Ս. Պուշկինը,— որը երեք օր Թեհրանի ամբոխի խաղի

[1] «Դուք դեռ չեք ճանաչում այդ մարդկանց, դուք կտեսնեք, որ գործը դանակների կհասնի»։ А. С. Пушкин, Соч., т. 8, кн. I-я, стр. 461, изд. Академии наук СССР, 1948.

առարկան էր եղել, ճանաչվեց միայն ձեռքից, որին մի ժամանակ ատրճանակի գնդակ էր դիպել»[1]։

Ռուսական դեսպանության նկատմամբ այս վայրագ դատաստանը ոգեշնչողները հույս ունեին, թե դա կհանգեցնի նոր պատերազմի Իրանի և Ռուսաստանի միջև։

Անգլիական գործակալները շատ ջանքեր գործադրեցին որպեսզի ստվերում մնան և խուսափեն այն մեղադրանքից, թե մասնակցել են այդ ստոր, դիվանագիտական հարաբերությունների պատմության մեջ անօրինակ բարբարոսական ակտին՝ Թեհրանի ռուսական դեսպանության նկատմամբ վայրագ պատաստանին։ Փքուն ու կեղծավոր այն բառերը, որոնցով Իրանում անգլիական պաշտոնական ներկայացուցիչները ցավակցություն էին հայտնում Ա. Ս. Գրիբոեդովի սպանության առթիվ, ոչ ոքի չկարողացան խաբել։

Գրիբոեդովի մահվան հանգամանքների վերաբերյալ Իրանից ստացված սրդեն առաջին տեղեկությունների հիման վրա գեներալ Պասկևիչը Նեսսելրոդեին գրել է. «Անգլիացիները անմասն չեն եղել Թեհրանում բռնկված խռովությանը... որովհետև նրանք անտարբեր չէին նայում Պարսկաստանում մեր մինիստրության գերադանցությանը և իրենց սեփական ազդեցության ոչնչացմանը»[2]։

Հետագայում Գրիբոեդովի սպանությանը անգլիացիների մասնակցության փաստը հաստատվեց ավելի որոշակի և ավելի անառարկելի կերպով[2]։

Ռուսական ներկայացուցիչները չէին կարող ուշադրություն չդարձնել այն բացահայտ ատելության վրա, որ անգլիացիները ցուցաբերում էին նույնիսկ մեռած Գրիբոեդովի նկատմամբ։ Այս տեսակետից չափազանց բնորոշ է տիսղոսավոր խորհրդական Մալցևի 1829 թվականի հունիսի 4-ի զեկույցը գեներալ Պասկևիչին։ Մալցևը գրել է. «Ես ստույգ իմացա, որ մեր հանգուցյալ դեսպանորդի մարմինն այստեղ հասնելուց հետո անգլիացիներից ոչ ոք չի դուրս եկել նրան դիմավորելու։ Նրանց պնդմամբ մարմինը չեն բերել Թավրիզ, այլ դրել են քաղաքից դուրս գտնվող հայկական մի փոքրիկ եկեղեցում, որտեղ նույնպես անգլիացիներից ոչ ոք չի եկել... Խոստովանում եմ, որ ես այդպիսի ստորություն երբեք չէի սպասում անգլիական դեսպանորդի կողմից։ Մի՞թե դրա մեջ էլ նա օգուտ է գտնում Օստ-Ինդիայի ընկերության համար, մարդուց վրեժ լուծելով նույնիսկ նրա մահից հետո»[3]։

Դրանից անմիջապես հետո Մալցևը հաղորդել էր. «Ասում են, որ անգլիացիները պարսիկներին նվեր են ուղարկում 5.000 հրացան և 7 թնդանոթ»։

Նկարագրելով Գրիբոեդովի հոգեհանգիստը Նախիջևանում, ռուսական հյուպատոս Ամբուրգերը հաղորդել է. «Զափազանց շատ ժողովուրդ կար՝ տղամարդիկ, կանայք և երեխաներ, որոնք կարծես բոլորն էլ խորը վշտակցում էին հանգուցյալի դժբախտ ճակատագրին, նրանց մեջ հաճախ լսվում էին բարձրաձայն հեծկլտանքներ։ Կանայք մինչև երեկո չէին հեռանում եկեղե-

---

[1] Նույն տեղում։

[2] Акты, т. VII, стр. 674.

[3] Տես В. Пашуто, Дипломатическая деятельность А. С. Грибоедова. „Ист. записки", т. 24, изд. Академии наук СССР, 1947.

[4] Акты, т. VII, стр. 702.

[5] Նույն տեղում։

ցուց, միայն պետք է նշել, որ դրանք մեծ մասամբ հայեր էին, իսկ նման վրշտակցությունը, իհարկե, պատիվ է բերում այդ ժողովրդին»։

Հանձին Գրիբոեդովի, հայ ժողովուրդը ողբում էր մի մարդու, որի անվան հետ է կապված այդ ժողովրդի կյանքում պատմական այնպիսի ակտ, ինչպիսին էր իրանական լծից ազատագրվելը և անխախտ կապերի հաստատումը ռուս մեծ ժողովրդի հետ։

Չկարողանալով վիժեցնել Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին՝ անգլիացիները ակտիվորեն արգելք էին հանդիսանում հայերի գաղթին Իրանից դեպի Երևանի նահանգը և ռուսների կողմից ազատագրված մյուս շրջանները։ Նրանք իրանական իշխանություններին դրդում էին ապօրինի, Թուրքմենչայի դաշնագրին հակասող գործողությունների, որպեսզի ձախողեն հայերի տեղափոխությունը։ Իրանից հայերի գաղթը վիժեցնելու նպատակով անգլիացիների պրովոկացիոն գործողությունների մասին Գլինկան հաղորդել է. «Հայերը թողնում էին թե՛ իրենց դաշտերը, թե՛ այգիները, և թե՛ տները։ Նրանց չէին կարող կասեցնել ոչ միայն պարսիկների ներշնչումներն ու անգլիական հավատարմատարի միջնորդությունը, այլ նույնիսկ ռուս չինովնիկի սեփական այն խոստովանությունը, թե նպաստ կստանան միայն չքավորները, ծայրահեղ կարիք ունեցողները, ոչ մի բան չէր կարող արգելք հանդիսանալ գաղթին»[1]։

Ռուս-թյուրքական 1828—1829 թթ. պատերազմում Թյուրքիան իր բոլոր հույսերը կապում էր Անգլիայի հետ, լիակատար աջակցություն սպասելով նրա կողմից։ «Ինքը՝ Բարձր Դուռը,— ասված է մի փաստաթղթում,— մեծ հույս է դնում Անգլիայի, Ավստրիայի և Շվեդիայի վրա»[2]։

Անգլիան թյուրքական սուլթանին ցույց էր տալիս բազմակողմանի տրնտեսական, ռազմական ու դիվանագիտական «օգնություն», որը չափազանց թանկ էր նստում թյուրքական ժողովրդին։ Իր քաղաքականությունն իրագործելու նպատակով Անգլիան օգտագործում էր ռեակցիոն իսլամի իդեոլոգիան՝ Թյուրքիայի կողմից ստրկացված և դեպի Ռուսաստան ձգտող ժողովուրդների ազատագրական շարժումների դեմ պայքարելու համար։

Ռուսաստանը կարող էր ընդմիշտ ազատագրել մի քանի միլիոն հայեր։ Բայց անգլիական դիվանագիտությունը ամեն հնարավոր բան արեց, որպեսզի նվազագույնի հասցնի ռուսական բանակի ռազմական հաջողությունները։ Եվ իսկապես, Ռուսաստանը ստիպված եղավ, Ադրիանապոլսի 1829 թվականի պայմանագրի համաձայն, թողնել Էրզրումը, Ղարսը և թյուրքերից ազատագրված մյուս հայկական շրջանները։ Անգլիական դիվանագիտության այդ հաջողությունները ողբերգություն հանդիսացան հայ ժողովրդի համար։ Դրանք հատուցվեցին հայկական արյան հեղեղներով։

Այսպիսով, երկար տասնամյակներ շարունակ թե՛ Անգլիան և թե՛ Ֆրանսիան հանդես են եկել որպես անդրկովկասյան ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման կատաղի հակառակորդներ։

(„Вопросы истории“, 1952 թ. № 3)։

---

[1] Акты, т. VII, էջ 697։

[2] С. Глинка, Обозрение истории армянского народа, ч. I, стр. 258. М. 1832. (ընդգծումն իմն է — Զ. Գ.)։

[3] ЦГВИА, ф. ВУА, д. 1481, стр. 10—11.